EmpowerYouth. Երիտասարդների ներգրավվածության և կլիմայի փոփոխության ուսումնական գործիքակազմ

Ուսումնական գործիքակազմը մշակվել է «EmpowerYouth. Երիտասարդներին հուզող հարցերի շուրջ որոշումների կայացման գործում երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում» երկարաժամկետ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է

- Romanian Center for European Policies (CRPE/Ռումինիա)
- Gyumri "Youth Initiative Centre" NGO (YIC/Հայաստան)
- Center for Research and Advocacy in EU Policies (CAREP/Մոլդովա)
- Association Atinati (ATINATI/Վրաստան)

կոնսորցիումի կողմից՝ Եվրոպական միության համաֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, սակայն, պատկանում են միայն հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ համընկնեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետներին: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում բովանդակության համար:

Բովանդակություն

Գործիքակազմի նպատակն է 3

Մաս 1. Երիտասարդների քաղաքացիական ներգրավվածության խթանում 3

1.1 Ի՞նչ է քաղաքացիական ակտիվությունը 3
1.2 Ի՞նչ է քաղաքացիական ներգրավվածությունը 3
1.3 Իրավունքներ ու պարտականություններ 4
1.4 Քաղաքացիական ներգրավվածության ձևերը 5
1.5 Քաղաքացիական ներգրավվածության ձևերի ուսումնասիրություն 5
1.6 Երիտասարդների մասնակցությունը քաղաքացիական և քաղաքական կյանքին (ԵՄ և մակարդակներով) 6
1.7 Երիտասարդների մասնակցությունը քաղաքացիական և քաղաքական կյանքին (ԵՄ մակարդակով) 9
1.8 Երիտասարդների մասնակցությունը քաղաքացիական և քաղաքական կյանքին (ազգային մակարդակով) 9
1.9 Երիտասարդների մասնակցության և ժողովրդավարական արժեքների ազդեցությունը (Հայաստան) 9
1.10 Քաղաքացիական ներգրավվածության ձևերը (Հայաստան) 10
1.11 Երիտասարդների մասնակցությունը ազգային կամ եվրոպական նախագծերին (Հայաստանի օրինակը) 11
1.12 Քաղաքացիական ներգրավվածության փուլերը 11
1.13 Բացահայտել համայնքի մարտահրավերներն ու կարիքները 11
1.14 Փաստագրել հայտնաբերված կարիքները և պարտականությունների բաժանում կատարել 13
1.15 Մշակել գործողությունների պլանը (առաջադրանք) 13
1.16 Քաղաքացիական հաջողված ներգրավվածության օրինակներ (ազգային մակարդակով) 16

Մաս 2. Կլիմայի փոփոխությունն ու երիտասարդների ներգրավվածությունը 23

2.1 Ի՞նչ է կլիմայի փոփոխությունը 23
2.2 Ի՞նչ է կլիմայի փոփոխությունը 24
2.3 Կլիմայի փոփոխություն. բացատրություն 24
2.4 Սննդային թափոններ. բացատրություն 25
2.5 Էներգիայի արդյունավետություն. բացատրություն 26
2.6 Խորհուրդներ և հնարքներ՝ էներգիա խնայելու համար 26
2.7 Ֆասթ ֆեշն. բացատրություն 28
2.8 Կլիմայի փոփոխության տերմինների բառարան (ինտերակտիվ ուսումնական խաղ) 29
2.9 ԵՄ-ի՝ կլիմայի ոլորտի նպատակները 30
2.10 Կլիմայի և երիտասարդության վերաբերյալ ընթացիկ տվյալներ 31
2.11 Հայաստանցիների վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ 32
2.12 Կլիմայի փոփոխության ազդեցությունները երեխաների վրա 34
2.13 Կոտրելով «Եվրոպական կանաչ գործարք»-ի մասին միֆերը 34
2.14 Հիմա Ձեր մասնակցության հերթն է. գործնական աշխատանք 36

ԵՄ ծրագրեր երիտասարդների ներգրավվածության և կլիմայի ոլորտում 37

Օգտակար ռեսուրսներ 38

Գործիքակազմի նպատակն է՝

- Ճանաչել քաղաքացիական ներգրավվածության տարբեր ձևերը և կարևորել երիտասարդների դերը համայնքների ձևավորման գործում:
- Սովորել՝ ինչպես բացահայտել մարտահրավերները, ներգրավել շահագրգիռ կողմերին և ստեղծել գործողությունների պլաններ՝ քաղաքացիական և բնապահպանական փոփոխություններ ներմուծելու համար:
- Հասկանալ բնապահպանական հիմնական խնդիրները, դրանց ազդեցությունը և թե ինչպես երիտասարդները կարող են նպաստել կլիմայի հետ կապված խնդիրների լուծմանը:
- Վերլուծել երիտասարդների մասնակցության միտումները, քաղաքական ներգրավվածությունը, ինչպես նաև կլիմայի վերաբերյալ առկա քաղաքականությունները՝ տեղական, ազգային և ԵՄ մակարդակներով:
- Բացահայտել ԵՄ ծրագրերը, ֆինանսավորման հնարավորությունները, ինչպես նաև քաղաքացիական ու բնապահպանական նախաձեռնություններում ներգրավված մնալու գործնական ուղիները:

Մաս 1. Երիտասարդների քաղաքացիական ներգրավվածության խթանում

1.1 Ի՞նչ է քաղաքացիական ակտիվությունը

Հարցրեք մասնակիցներին. Ինչպե՞ս կսահմանեք քաղաքացիական ներգրավվածությունը մեկ բառով:

Ցուցումներ. Այցելե՛ք Mentimeter կայք և մուտքագրե՛ք հարցը՝ այն «բառի ամպ»-ի (word cloud) տեսքով ներկայացնելու համար:

Խրախուսե՛ք մասնակիցներին մտածել այնպիսի բառերի մասին, որոնք նկարագրում են ակտիվ քաղաքացի լինելը, մասնակցությունը կամ համայնքի կյանքին ներգրավված լինելը: Մասնակիցների հետ կիսվե՛ք Mentimeter-ի հղումով կամ QR կոդով: Ցու՛յց տվեք նրանց ստեղծված «բառի ամպ»-ը պրոյեկտորի կամ էկրանի վրա: Նշե՛ք առավել հաճախ հիշատակված պատասխանները: Խրախուսե՛ք կարճատև բանավեճ հիմնական տերմինների վերաբերյալ՝ դրանք կապելով իրական քաղաքացիական նախաձեռնությունների հետ:

1.2 Ի՞նչ է քաղաքացիական ներգրավվածությունը

Հարցրեք մասնակիցներին. Ի՞նչ է քաղաքացիական ներգրավվածությունը: Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ է քաղաքացիական ներգրավվածությունը կարևոր:

Հուշում. Քաղաքացիական ներգրավվածություն նշանակում է քայլեր ձեռնարկել՝ սեփական համայնքը բարելավելու ուղղությամբ, և ոգևորել մյուսներին՝ նույնը անել: Այն ենթադրում է

ոչ թե միայն մեկ գործողություն, այլ տարբեր միջոցներ, որոնցով անհատները կարող են նպաստել հասարակությանը:

Հարցրեք մասնակիցներին. Կարո՞ղ եք քաղաքացիական ներգրավվածության մի քանի օրինակ նշել:

Ցուցումներ. Խրախուսե՛ք մասնակիցներին լայն մտածել, օրինակ՝ անդրադառնալով այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են կամավորությունը, քվեարկությունը, ակտիվիզմը, համայնքային նախագծերը և այլն:

- Մասնակիցների պատասխանները գրե՛ք գրատախտակի, ֆլիպչարտի վրա կամ համակարգչով դրանք անմիջապես անցկացրե՛ք սահիկաշարի վրա:
- Ամփոփե՛ք քաղաքացիական ներգրավվածության նշված տարբեր ձևերը:

1.3 Իրավունքներ ու պարտականություններ

Հարցրեք մասնակիցներին. Ըստ ձեզ՝ որո՞նք են ձեր իրավունքներն ու պարտականությունները որպես երիտասարդներ:

Ցուցում. Բացատրե՛ք տարբերությունը.

- **Իրավունքներ** = ազատություններ և արտոնություններ, որ նրանք պետք է ունենան (օրինակ՝ կրթություն, խոսքի ազատություն):
- **Պարտականություններ** = պարտավորություններ, որ նրանք պետք է ստանձնեն (օրինակ՝ հարգել ուրիշներին, հետևել կանոններին):

Հուշում. Խնդրե՛ք յուրաքանչյուր մասնակցի թվարկել, ըստ իրենց, առնվազն մեկ կարևոր իրավունք և մեկ պարտականություն:

- Ամփոփե՛ք քննարկված գլխավոր իրավունքներն ու պարտականությունները: Ընտրե՛ք ամենակարևոր հինգ իրավունքն ու հինգ պարտականությունը, որոնց հետ մասնակիցները համաձայն են:
- Ընդգծե՛ք, որ իրավունքներից բխում են պարտականությունները, և երկուսն էլ վճռորոշ դեր ունեն ակտիվ քաղաքացիական կյանքի համար:

1.4 Քաղաքացիական ներգրավվածության ձևերը

Հարցրեք մասնակիցներին. Մասնակիցներից յուրաքանչյուրին ուղղե՛ք հետևյալ հարցերը.

- Եթե կարողանայիք ինչ-որ բան բարեփոխել կամ վերափոխել ձեր համայնքում, ինչը՞ դա կլիներ:
- Դրա համար ի՞նչ էական ռեսուրսներ, հնարավորություններ կամ նախաձեռնություններ են բացակայում ձեր համայնքում:

Ցուցումներ. Բացատրե՛ք, որ քաղաքացիական ներգրավվածությունը սկսվում է տեղական կարիքները հասկանալուց և դրանց համար լուծումներ առաջարկելուց: Ամփոփե՛ք քննարկված ամենատարածված կարիքները: Եզրափակե՛ք՝ ընդգծելով, որ խնդիրների բացահայտումը առաջին քայլն է՝ համայնքային գործողություն նախաձեռնելու համար:

1.5 Քաղաքացիական ներգրավվածության ձևերի ուսումնասիրություն

Բացատրեք. Քաղաքացիական ներգրավվածությունը կարող է ունենալ տարբեր ձևեր՝ ցույցերից մինչև կամավորություն կամ համայնքային միջոցառումներ:

Հարցրեք մասնակիցներին. Ձեր կարծիքով՝ որո՞նք են այն ամենատարածված ձևերը, որոնց միջոցով մարդիկ ներգրավվում են իրենց համայնքներում:

Ցուցում. Ցուցադրե՛ք քաղաքացիական ներգրավվածության տարբեր ձևեր ներկայացնող լուսանկարներ, ինչպիսիք են կամավորական աշխատանքը, բողոքի ցույցերը, սոցիալական աշխատանքը, համայնքային միջոցառումները և քվեարկությունը:

Հարցրեք մասնակիցներին. Ի՞նչ եք տեսնում տվյալ լուսանկարներում: Ներգրավվածության ո՞ր ձևերն են ձեզ համար ընդունելի: Եթե այսօր անհրաժեշտ լիներ միանալ այս նախաձեռնություններից որևէ մեկին, ո՞րը կընտրեիք և ինչո՞ւ: Երբևէ մասնակցե՞լ եք նմանատիպ նախաձեռնության: Ո՞րն էր ձեր դերը այդ նախաձեռնության մեջ:

Կամավորական աշխատանք

«Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի միջազգային կամավորների հանդիպում տեղի երիտասարդների հետ
© Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, 2024

Հասարակական միջոցառումներ

«Եվրաակումբ Գյումրի» ծրագրի շրջանակներում «Երիտասարդ եվրոպական դեսպաններ» նախաձեռնության անդամները իրականացրել են ծառատունկ
© Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, 2024

Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպը խրախուսող միջոցառում

«Երիտասարդ քաղաքացիները գործում են. երիտասարդները որպես տեղական ժողովրդավարության ջատագովներ և ակտիվիստներ» ծրագիր
© Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, 2024

Տեղական իշխանությունների հետ շփում

«ՏԻՄ-ՔՀԿ ներկայացուցիչների կարողությունների զարգացում. Երիտասարդական միջավայրի ձևավորում և համայնքային երիտասարդական ծառայությունների տրամադրում» ծրագրի առաջին փուլի ամփոփիչ միջոցառում
© Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, 2024

Կամավորական աշխատանքը խրախուսող միջոցառում

«Դու կարող ես». Գյումրու երիտասարդությանը կամավորական գործունեությամբ ոգևորելու ֆլեշմոբ
© Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, 2012

1.6 Երիտասարդների մասնակցությունը քաղաքացիական և քաղաքական կյանքին (ԵՄ և ազգային մակարդակներով)

Ցուցում. Ներկայացրե՛ք և քննարկե՛ք հետևյալ վիճակագրությունները.

Մասնակցություն՝ ԵՄ մակարդակով.

- **Հարցված երիտասարդների 56%-ն օգտագործում է սոցիալական մեդիան՝ ԵՄ-ի մասին տեղեկացված լինելու համար**: **Հեռուստատեսությունը երկրորդ կարևոր միջոցն է** (հարցվածների 49%): Երրորդ տեղում առցանց մամուլը, փոդքասթները և(կամ) լրատվական հարթակներն են (հարցվածների 33%):
- Երիտասարդների կարծիքով՝ որոշումներ կայացնողների շրջանում իրենց ձայնը լսելի դարձնելու երկու ամենաարդյունավետ միջոցներն են **տեղական, ազգային կամ եվրոպական ընտրություններին մասնակցելը (38%)** և **սոցիալական մեդիայում ակտիվ ներգրավվածությունը (32%)**:
- **Վերջին 12 ամսվա ընթացքում երիտասարդների 64%-ը մասնակցել է մեկ կամ մի քանի երիտասարդական միջոցառման**: Առաջին տեղում են սպորտային ակումբները (33%), որոնց հաջորդում են երիտասարդական և ժամանցի ակումբները կամ այլ երիտասարդական նախաձեռնությունները (18%), այնուհետև՝ կամավորական գործունեությանը նվիրված միջոցառումները (17%) և մշակութային միջոցառումները (15%): Հարցված երիտասարդների 10%-ը մասնակցել է կլիմայի փոփոխությանը կամ բնապահպանական խնդիրներին վերաբերող միջոցառումների:
- **Երիտասարդների 43%-ը մասնակցել է մասնագիտական, կամավորական, կրթական կամ սպորտային ծրագրերի մեկ այլ ԵՄ երկրում:**
- ԵՄ այլ երկրում միջոցառումների մասնակցած երիտասարդների 36%-ը կարծում է, որ այդ փորձը օգնել է իրեն ավելի լավ ճանաչելու այլ մշակույթներն ու արժեքները: 35%-ը նշում է, որ այդ փորձը մեծացրել է իրենց հետաքրքրվածությունը օտար լեզուների նկատմամբ կամ բարձրացրել է իրենց ինքնավստահությունը, իսկ 24%-ը հայտնել է, որ այսպիսի միջոցառումներից հետո իրեն ավելի շատ է որպես եվրոպացի զգացել:
- Մասնակցություն չցուցաբերելու հիմնական պատճառներն են ֆինանսական միջոցների պակասը (37%) և հետաքրքրության բացակայությունը (28%):
- Երիտասարդների հիմնական սպասելիքները ԵՄ-ից իրենց սերնդի համար հետևյալն են՝ խաղաղության պահպանումը, միջազգային անվտանգության ուժեղացումը և միջազգային համագործակցության խթանումը (37%), աղքատության ու սոցիալ-տնտեսական անհավասարությունների դեմ պայքարը (34%), մարդու իրավունքների, ժողովրդավարության և համընդհանուր եվրոպական արժեքների խթանումը (30%), ինչպես նաև երիտասարդների համար նոր աշխատատեղերի ստեղծումը (28%):

Տեղեկատվության աղբյուրներ.

- **Հեռուստատեսություն.** Հայաստանում 56%-ը հեռուստատեսությունը համարում է քաղաքական և հասարակական նորությունների հիմնական աղբյուրը:

- **Թվային հարթակներ.** Հայաստանում 56%-ը նորություններին ծանոթանալու համար հենվում է նաև թվային հարթակների վրա՝ ընդգծելով առցանց լրատվամիջոցների նշանակությունը: Հարցվածների 59%-ը հայտնել է, որ օրական մի քանի անգամ օգտվում է Viber-ից և WhatsApp-ից, իսկ Facebook-ն ու YouTube-ը հաջորդում են դրանց՝ 58%-ով: Հայերի 58%-ն օգտվում է սոցիալական ցանցերից, բլոգներից, վլոգներից և փոդքասթներից՝ որպես քաղաքական և հասարակական նորությունների գլխավոր աղբյուր:

Քաղաքացիական և քաղաքական մասնակցություն.

- **Կամավորություն**. Վերջին մեկ տարվա ընթացքում հայ երիտասարդների միայն **15,9%**-ն է կամավորական գործունեությամբ զբաղվել: Կամավորների 26,1%-ը դա արել է դպրոցում կամ համալսարանում, իսկ 21,6%-ը՝ հասարակական կազմակերպություններում:
- **Քաղաքական հետաքրքրություն.** Հայաստանցի երիտասարդների 59,1%-ը քաղաքականության նկատմամբ հետաքրքրություն չունի, ինչը վկայում է քաղաքական անտարբերության մասին: Բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների 52,1%-ը համեմատաբար ավելի հազվադեպ է հայտնում, որ քաղաքականությամբ ընդհանրապես հետաքրքրված չէ, քան այն երիտասարդները, ովքեր ունեն թերի կամ միջնակարգ կրթություն (63,1%): Մինչև 17 տարեկանների 54,7%-ը մի փոքր ավելի քիչ է հակված քաղաքական անտարբերության դրսևորման, քան ավելի բարձր տարիքային խմբերը. 18-24 տարեկանների մոտ գրանցվել է 61,5%, իսկ 25-29 տարեկանների մոտ՝ 62,1%: Մայրաքաղաքի երիտասարդների 65,3%-ը հակված է քաղաքականության նկատմամբ մի փոքր ավելի անտարբեր լինելուն, քան այլ քաղաքներում (57,3%) կամ գյուղերում (60,0%) բնակվող երիտասարդները:

Մասնակցության խոչընդոտները.

- **Լրատվամիջոցների հանդեպ ունեցած վստահություն**. 2022 թվականին Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի կողմից անցկացված հարցումը ցույց է տվել, որ հայաստանցի երիտասարդների միայն **12%**-ն է վստահում լրատվամիջոցներին՝ հանգեցնելով այն ենթադրությանը, որ լրատվամիջոցների հանդեպ ունեցած անվստահությունը կարող է խոչընդոտել նրանց քաղաքացիական ներգրավվածությանը:

Աղբյուրներ՝
Youth study Armenia (in)dependence generation, 2023
Friedrich-Ebert-Stiftung South Caucasus (FES)
https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20652.pdf?utm_source=chatgpt.com

Media Market Analysis: Armenia
Zinc Network March 2024
https://internews.org/wp-content/uploads/2024/02/Media-Market-Analysis-Report.pdf?utm_source=chatgpt.com

Flash Eurobarometer 545, April 2024
Youth and democracy
https://europa.eu/eurobarometer/surveys/detail/3181

1.7 Երիտասարդների մասնակցությունը քաղաքացիական և քաղաքական կյանքին (ԵՄ մակարդակով)

Ցուցում. Ներկայացրե՛ք և քննարկե՛ք հետևյալ վիճակագրությունը.

Ազգային մակարդակով որոշում կայացնողների կողմից մարդկանց ձայնը լսելի դարձնելու լավագույն միջոցներից ամենաարդյունավետը **ընտրություններին մասնակցելն է (քվեարկելը)**, թեև երիտասարդները (15-24 տարեկան) գտնում են, որ այն ավելի քիչ ազդեցություն ունի (55%)՝ համեմատած տարեցների ցուցանիշի հետ (72%): Ավելի երիտասարդ հարցվողների շրջանում **ցույցերը** երկրորդ ամենանախընտրելի մեթոդն են (33%), մինչդեռ ավելի բարձր տարիքային խմբերը գերադասում են **հանրագրերը՝ պետիցիա** (25%), և քաղաքացիների **բանավեճերը** կամ **հավաքները** (19%)՝ որպես որոշում կայացնողների վրա ազդելու այլընտրանքային միջոցներ: Բացի դրանից՝ երիտասարդներն ավելի հակված են **առցանց բանավեճերին** (21%), մինչդեռ տարեց հարցվողները առաջնահերթություն են տալիս մասնակցության **ավանդական մեթոդներին** (ընտրություններ, հանրագրերը և այլն):

Աղբյուր՝
Special Eurobarometer 517 Report, Future of Europe (2021)
https://europa.eu/eurobarometer/surveys/detail/2554

1.8 Երիտասարդների մասնակցությունը քաղաքացիական և քաղաքական կյանքին (ազգային մակարդակով)

Ցուցում. Ներկայացրե՛ք և քննարկե՛ք հետևյալ վիճակագրությունը.

- Երիտասարդների 20%-ը մասնակցել է իրենց տեղական համայնքների խնդիրների լուծմանը, իսկ 9,1%-ը նվիրատվություն է արել հասարակական կամ քաղաքական նախաձեռնությունների համար: Միայն 3,8%-ն է ներգրավված եղել քաղաքական կուսակցությունների կամ խմբերի գործունեությանը:

Աղբյուր՝
Youth study Armenia (in)dependence generation, 2023
Friedrich-Ebert-Stiftung South Caucasus (FES)
https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20652.pdf?utm_source=chatgpt.com

1.9 Երիտասարդների մասնակցության և ժողովրդավարական արժեքների ազդեցությունը (Հայաստան)

Ցուցում. Ներկայացրե՛ք և քննարկե՛ք հետևյալ վիճակագրությունը.

- Չնայած քաղաքականության մեջ ներգրավված լինելու ընդհանուր ցածր մակարդակին, հայաստանցի երիտասարդների 67%-ը համոզված է, որ կարող է ազդեցություն ունենալ երկրում որոշումների կայացման վրա: Քաղաքականության հանդեպ հետաքրքրությունը դեռևս մնում է ցածր. 59,1%-ի մոտ գրանցվել է անտարբերություն քաղաքականության հանդեպ, այդ ցուցանիշն ավելի մեծ է հատկապես Երևանում՝ 65,3%:

- Երիտասարդների 20%-ը մասնակցել է համայնքային խնդիրների լուծմանը, իսկ 9,1%-ը նվիրատվություն է արել հասարակական կամ քաղաքական նախաձեռնությունների համար: Միայն 3,8%-ն է ներգրավված եղել քաղաքական կուսակցությունների գործունեությանը: Բողոքի ցույցերին, հանրագրերին և քաղաքական քննարկումներին մասնակցությունը շարունակում է մնալ նվազագույն մակարդակի վրա:
- Երիտասարդներն ակնկալում են, որ ժողովրդավարությունը պետք է կետրոնացած լինի մարդու իրավունքների, սոցիալական արդարության և կառավարության հաշվետվողականության վրա, թեև շատերը կարծում են, որ քաղաքական համակարգը չի արձագանքում իրենց կարիքներին:

Աղբյուրներ՝
Youth study Armenia (in)dependence generation, 2023
Friedrich-Ebert-Stiftung South Caucasus (FES)
https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20652.pdf?utm_source=chatgpt.com

Dialogues about tomorrow: Armenia youth debates, 2023
National Democratic Institute (NDI)
https://www.ndi.org/our-stories/dialogues-about-tomorrow-armenia-youth-debates?utm_source=chatgpt.com

1.10 Քաղաքացիական ներգրավվածության ձևերը (Հայաստան)

Հարցրեք մասնակիցներին. Ինչպե՞ս կբացատրեք այս տվյալները.

1. Երիտասարդների քաղաքացիական ներգրավվածություն.
    - Երիտասարդների 67%-ը կարծում է, որ կարող է ազդել ազգային մակարդակով կայացվող որոշումների վրա:
    - Քաղաքական համակարգի՝ խնդիրներին ժամանակին արձագանքելու թերացումը երիտասարդների մոտ մեծ մտահոգություն է առաջացնում՝ նպաստելով նրանց ընդհանուր անտարբերությանը:
2. Մասնակցության խոչընդոտները.
    - Հայաստանում երիտասարդության ներգրավվածության ցածր մակարդակի հիմնական պատճառներն են համակարգային խոչընդոտներն ու քաղաքականության հանդեպ անտարբերությունը:

Աղբյուրներ՝
Youth study Armenia (in)dependence generation, 2023
Friedrich-Ebert-Stiftung South Caucasus (FES)
https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20652.pdf?utm_source=chatgpt.com

Dialogues about tomorrow: Armenia youth debates, 2023
National Democratic Institute (NDI)
https://www.ndi.org/our-stories/dialogues-about-tomorrow-armenia-youth-debates?utm_source=chatgpt.com

1.11 Երիտասարդների մասնակցությունը ազգային կամ եվրոպական նախագծերին (Հայաստանի օրինակը)

Ցուցում. Ներկայացրե՛ք և քննարկե՛ք հետևյալ վիճակագրությունը.

- **2015-2017** թվականներ. Այս ընթացքում շուրջ 1300 ուսանող և դասախոսական կազմի ներկայացուցիչ Հայաստանից մասնակցել է «Էրազմուս+» շարժունակության ծրագրերին:
- **2014-2020** թվականներ. Մոտ 2500 ուսանող և դասախոսական կազմի ներկայացուցիչ Հայաստանից հնարավորություն է ստացել սովորելու կամ դասավանդելու Եվրոպայում, իսկ հավելյալ 8000 երիտասարդ «Էրազմուս+»-ի շրջանակներում ներգրավված է եղել կարճաժամկետ փոխանակման, վերապատրաստման և կամավորական ծրագրերում:

Աղբյուրներ՝
EU – Armenia Relations
https://enlargement.ec.europa.eu/european-neighbourhood-policy/countries-region/armenia_en?utm_source=chatgpt.com

Factsheets and statistics on Erasmus+
https://erasmus-plus.ec.europa.eu/resources-and-tools/statistics-and-factsheets?utm_source=chatgpt.com

1.12 Քաղաքացիական ներգրավվածության փուլերը

Եռաստիճան մոտեցում.

1. **Աշխատանքի մեկնարկ.** Բացահայտե՛ք այն կարիքը կամ մարտահրավերը, որը ցանկանում եք լուծել:
2. **Վերլուծություն.** Փաստագրե՛ք հայտնաբերված կարիքները և պարտականությունների բաժանում կատարե՛ք:
3. **Գործողությունների պլանավորում.** Մշակե՛ք գործողությունների պլան:

1.13 Բացահայտել համայնքի մարտահրավերներն ու կարիքները

Ցուցում. Ի՞նչը կցանկանաք բարեփոխել ձեր համայնքում: Խնդրե՛ք մասնակիցներին բերել 2-3 օրինակ: Ի՞նչ խնդրի կամ կարիքի ենք ցանկանում անդրադառնալ:

Կարիքների բացահայտման համար կարևոր է ուշադրություն դարձնել հետևյալ սկզբունքներին.

1. Հեշտ ըմբռնելիություն,
2. Ազդեցություն համայնքի/թաղամասի/դպրոցի վրա, եթե ցանկանում ենք խմբային գործողություն նախաձեռնել,
3. Ցանկալի է, որ այն չպառակտի համայնքը,
4. Քարոզարշավի պլանավորում՝ հստակ նպատակներով, չափանիշներով և ցուցիչներով:

Ցուցումներ. Խմբի հետ քննարկե՛ք նոր հեծանվային ուղիները, վերանորոգված մայթերը, աղտոտվածությունը, թափոնների վերամշակումը, պետական մարմինների մշտադիտարկումը, քաղաքացիական խմբին միանալու գործընթացը և դիտեք ստորև ներկայացված պատկերները: Եզրափակելով ընդգծե՛ք, որ քաղաքացիական ներգրավվածությունը սկսվում է հստակ, հիմնավոր կարիքների բացահայտմամբ:

Հեծանվային ուղիներ Երևանում
© Հայաստանի հանրային ռադիո

«Boo Mountain Bike Park» Վանաձորում
© Boo Mountain Bike Park

Անդրկովկասյան արահետ Հայաստանում. նոր նշաններ արշավականների համար
© Անդրկովկասյան արահետ

Թափոնների կառավարման համակարգ Երևանում
© Երևանի քաղաքապետարան

1.14 Փաստագրել հայտնաբերված կարիքները և պարտականությունների բաժանում կատարել

Ցուցում. Մասնակիցների հետ քննարկե՛ք հետևյալ մանրամասները.

1. Որքան հնարավոր է շատ տեղեկատվություն հավաքե՛ք ձեր հայտնաբերած կարիքի վերաբերյալ (ե՞րբ է այն առաջացել, ո՞ւմ վրա է այն ազդում, որո՞նք են դրան չարձագանքելու հետևանքները, ո՞վ կարող է օգնել մեզ կամ ո՞վ կարող է ընդդիմանալ, ինչպե՞ս են այլ համայնքները լուծել նմանատիպ խնդիրները և այլն):

2. Ո՞վ կարող է լուծել մեր հարցը: Ո՞ւմ պետք է դիմենք (օրինակ՝ տեղի քաղաքապետարանին, ոստիկանությանը, մեր դպրոցին, խորհրդարանին, բնապահպանության վերահսկման մարմնին և այլն): Կախված խնդրից՝ մեկ ուրիշը կարող է դրա համար պատասխանատու լինել կամ օգնել մեզ լուծելու տվյալ խնդիրը:

3. **Ոչինչ չի փոխվի, եթե մենք ոչ մի քայլ չձեռնարկենք:** Շատ դեպքերում կարևոր կապ կա մեր գործողությունների/անգործության և հանրային որոշումների կայացման գործընթացի միջև, բայց գոյություն ունի նաև բաց մեր գործողությունների/անգործության և այն բանի միջև, ինչի վրա մենք կարծում ենք, որ կարող ենք ազդել մեր քաղաքացիական ներգրավվածության միջոցով:

1.15 Մշակել գործողությունների պլանը (առաջադրանք)

Ցուցումներ. Մինչ լուծումներ ներկայացնելը, մասնակիցներին խնդրե՛ք, որ որոշեն և նշեն իրենց ձեռնարկելիք քայլերը՝ հիմնվելով եռաստիճան մոտեցման վրա (խնդիր → որոշում կայացնողներ → գործողություն): Այնուհետև ներկայացրե՛ք սույն կառուցվածքային աղյուսակը, որը կծառայի որպես ուղեցույց՝ քաղաքացիական ներգրավվածության ռազմավարություններ մշակելու համար: Դրանից հետո բերե՛ք հետևյալ օրինակները և քննարկե՛ք դրանցից մեկը:

Խնդիր/ կարիք	Ո՞ւմ դիմել տվյալ հարցով	Ի՞նչ կարող են նրանք անել	Հնարավոր գործողություններ	Դաշնակիցներ	Հիմնական նկատառումներ
Օդի աղտոտվածություն և տեղեկատվության բացակայություն	Քաղաքապետարան (քաղաքապետ, բնապահպանության վարչություն), տեղական խորհուրդ	Տեղադրել օդի որակի սենսորներ, մշակել օդի որակի բարձրացման գործողությունների պլան	Հանրագիր ներկայացնել, մասնակցել հանրային հանդիպումների և պահանջել համապատասխան գործողություններ ձեռնարկել	Քաղաքացիներ, հասարակական կազմակերպություններ, դպրոցներ, առողջապահության ոլորտի փորձագետներ	Համոզվեք, որ խնդիրը չափելի է (տվյալներ, զեկույցներ), հաշվի առեք բյուջետային սահմանափակումները և հետևեք, որ կառավարությունն իր խոստումները կատարի
Բնապահպանական մասնակցային բյուջետավորում	Քաղաքապետարան (ֆինանսական բաժին), տեղական խորհուրդ	Քաղաքային բյուջեի մի մասը հատկացնել բնապահպանական ծրագրերին	Քաղաքապետարանի հանդիպումների ժամանակ բնապահպանական բյուջեի տրամադրումը առաջ մղել, հանրային իրազեկմանն ուղղված քարոզարշավներ կազմակերպել, ռազմավարություն մշակել	Երիտասարդներ, բնապահպանական խմբեր, ուսուցիչներ	Ներկայացնել հաջողության պատմություններ՝ այլ քաղաքներից, ժամանակ հատկացնել բյուջեի պլանավորման գործընթացներին
Թափոնների կառավարում և վերամշակում	Քաղաքապետարան, թափոնների կառավարման մարմիններ	Հրապարակել վերամշակման վերաբերյալ տվյալներ, բարելավել թափոնների կառավարման քաղաքականությունները	Դիմում ուղարկել՝ թափոնների վերաբերյալ տվյալներին հասանելիություն ստանալու համար, կազմակերպել աուդիտներ/հանդիպումներ տեղական խմբերի հետ, հաշվետվությունների հարթակ	Ակտիվիստներ, դպրոցներ, լրատվամիջոցներ	Հետևել, որ տեղական իշխանությունները կանոնավոր թարմացումներ տրամադրեն, օգտվել սոցիալական մեդիայից՝ թափոնների վերաբերյալ բացահայտված խնդիրները լուսաբանելու համար

			ստեղծել քաղաքացիա-կան անձանց համար		
Տեքստիլ թափոն-ների կառավա-րում	Քաղաքապետա-րան, թափոնների կառավարման մարմիններ, մանրածախ առևտուր իրականացնող-ներ	Վերլուծել տեքստիլ թափոնների իրավիճակը՝ տեղական մակարդակով, մշակել թափոնների կառավարման քաղաքակա-նություն, հիմնել և խթանել թափոնների հավաքագր- ման և վերամշակման կետերը	Կազմակերպել համայնքային միջոցառումներ, ինչպիսիք են հագուստի փոխանակումը կամ վերանորոգման սեմինարները և դրանց հրավիրել տեղի համայնքի որոշում կայացնողներին	Հասարակական կազմակերպութ-յուններ, բնապահպանա-կան խմբեր, դպրոցներ, օգտագործված ապրանքների վաճառքով զբաղվող խանութներ	Օգտագործել առցանց և անցանց հաղորդակցման մեթոդներ՝ տեղացիների շրջանում տեքստիլ թափոնների և ֆաստ ֆեշնի (արագ նորաձևություն) մասին իրազեկվածութ-յունը բարձրացնելու համար
Սննդային և օրգանա-կան թափոն-ների կառավա-րում	Քաղաքապետա-րան, թափոնների կառավարման մարմիններ, ռեստորաններ, մթերային խանութներ	Գործարկել սննդային թափոնների կրճատման ռազմավարութ-յուններ,ֆինան-սական աջակցություն տրամադրել կոմպոստաց-մամբ զբաղվող անհատներին և քաղաքապետա-րանին, խրախուսել բիզնեսներին նվիրաբերել իրենց ավելցուկային սնունդը	Կազմակերպել տեղական միջոցառումներ, ինչպիսիք են ճաշատեսակ-ների հանրային համտեսումը կամ խոհարարական աշխատարան-ները՝ դրանց հրավիրելով իշխանության ներկայացուցիչ-ներին	Հասարակական կազմակերպութ-յուններ, տեղական պարենի բանկեր, դպրոցներ և համալսարաններ	Հաշվի առնել սննդի նվիրատվության իրավական և տեխնիկական մարտահրավեր-ները, օգտվել սոցիալական մեդիայից՝ տեղական նախաձեռնություն-ները խթանելու համար

1.16 Քաղաքացիական հաջողված ներգրավվածության օրինակներ (ազգային մակարդակով)

Ցուցումներ. Խմբի հետ քննարկե՛ք Հայաստանում տեղի ունեցած ազդեցիկ քարոզարշավները կամ շարժումները: Նկարագրե՛ք դրանց ազդեցությունը և ցուցադրե՛ք քննարկմանը համապատասխան լուսանկարներ:

Ամուլսար. 2018, 2019 և 2020 թվականներին բնապահպան ակտիվիստները ցույցեր կազմակերպեցին Ամուլսարի ոսկու հանքի գործարկման դեմ. նրանք մտավախություն ունեին, որ ոսկու հանքի գործարկումը կվտանգի տարածաշրջանի ջրային ռեսուրսները, կենսաբազմազանությունը և Ջերմուկի հայտնի հանքային աղբյուրները: Կարգախոսներ վանկարկելով և պաստառներ ձեռքներին՝ նրանք փակել էին հանք տանող ճանապարհները՝ կառավարությունից պահանջելով հետ կանչել հանքաարդյունաբերության թույլտվությունները: Չնայած ոստիկանության միջամտությանը և քաղաքական բանավեճերին, ակտիվիստները անկոտրում մնացին՝ պնդելով, որ չպետք է կարճաժամկետ տնտեսական շահեր ստանալ՝ շրջակա միջավայրի վրա անդառնալի վնասի գնով: Նրանց ցույցերը ամբողջ երկրով մեկ քննարկումների սկիզբ տվեցին կայուն զարգացման, ինչպես նաև տնտեսական աճի և բնապահպանության միջև հավասարակշռության շուրջ:

Ավելին՝ https://hetq.am/en/tag/Amulsar

© Հայկական բնապահպանական ճակատ

Փրկենք Թեղուտը. Հայաստանում բնապահպանական շարժում է, որի նպատակն է պաշտպանել Թեղուտի անտառը պղնձամոլիբդենային հանքաարդյունաբերական նախագծից: 2010-ականների սկզբին կազմակերպված քարոզարշավը մտահոգություն էր առաջացրել հանքի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, ներառյալ անտառահատումների և կենսաբազմազանության կորստի առումով: Ակտիվիստները, տեղի բնակիչները և բնապահպանները բողոքեցին նախագծի դեմ՝ պահանջելով ավելի կայուն զարգացման պլան: Չնայած մարտահրավերներին՝ շարժումը շարունակում է պայքարել Հայաստանում շրջակա միջավայրի ավելի ուժեղ պաշտպանական համակարգերի համար:

Ավելին՝ https://armenianweekly.com/2012/02/21/save-teghut-redefines-environmental-activism-in-armenia/

© PanARMENIAN Photo

Մաշտոցի պուրակ. 2012 թվականին Երևանում բնապահպան ակտիվիստները ցույցեր կազմակերպեցին՝ Մաշտոցի պուրակը կոմերցիոն տարածքի վերածվելու վտանգից փրկելու համար: Քաղաքապետարանը պուրակում կրպակներ կառուցելու թույտվություն էր տրամադրել, ինչը բորբոքել էր ակտիվիստների վրդովմունքը, քանի որ նրանք դա համարում էին հարձակում հանրային կանաչ տարածքների վրա: Ցուցարարները վրանային ճամբար էին տեղադրել՝ խաղաղ ցույցեր անցկացնելով: Նրանք նաև նստացույցեր էին կազմակերպել՝ շինարարությանը խոչընդոտելու համար: Շարժումը լայն աջակցություն ստացավ հանրությունից, և շաբաթներ տևած ճնշումներից հետո Հայաստանի նախագահը հրամայեց հեռացնել կրպակները, ինչը երկրում նշանավորվեց որպես քաղաքացիական ակտիվիզմի հազվագյուտ հաղթանակ: Մաշտոցի պուրակի ցույցերը դարձան Հայաստանում բնապահպանական և քաղաքային ակտիվիզմի խորհրդանիշ:

Ավելին՝ https://hetq.am/en/tag/mashtoc-garden

© evnmag.com

Թռչկանի ջրվեժի բնական հուշարձանը՝ Հայաստանի ամենաբարձր ջրվեժը, վտանգի տակ էր հայտնվել 2011 թվականին ՀԷԿ-ի նախագծի պատճառով: Ակտիվիստները, բնապահպանները և տեղացիները ցույցեր կազմակերպեցին՝ պաշտպանելու տեղանքը՝ ընդգծելով դրա բնապահպանական և զբոսաշրջային արժեքը: Այս ջանքերը հանգեցրին նրան, որ կառավարությունը որոշում կայացրեց դադարեցնել ծրագիրը՝ երաշխավորելով, որ ջրվեժը կմնա որպես բնության պահպանվող հուշարձան: Բնապահպանական այս հաջողությունը կարևորեց Հայաստանում քաղաքացիական ակտիվիզմի ուժը:

Ավելին՝ https://hetq.am/en/tag/trchkan

© Եղիա Ներսեսեան, Պահպանենք Թռչկանի ջրվեժը Facebook-յան խումբ

«Green Green». Այս նախաձեռնությունը խթանում է Հայաստանի շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք և ռեսուրսների կայուն

օգտագործում: Հասարակական միջոցառումներ, էկո-իրազեկման քարոզարշավներ և համայնքային նախաձեռնություններ իրականացնելով՝ այն անդրադառնում է բնապահպանական խնդիրների լուծմանը, վերականգնում քաղաքային կանաչ տարածքները և խրախուսում էկոլոգիապես գիտակցված կենսակերպ: «Green Green»-ը լավագույն փորձի փոխանակման և համագործակցության զարգացման միջոցով նպաստում է հայաստանցիների՝ ավելի մաքուր և կանաչ ապագա կերտելուն:

Ավելին՝ *https://greengreen.am/en*

© Green Green

«Էյ Թի Փի»-ին (Armenia Tree Project) աջակցում է հայաստանցիներին ծառատունկի միջոցով բարելավել իրենց կենսապայմանները և պահպանել շրջակա միջավայրը: Հենվելով ինքնաբավության և բնության պահպանության սկզբունքների վրա՝ «Էյ Թի Փի»-ն առաջնահերթ ուշադրություն է դարձնում կարիքավոր խմբերին՝ միաժամանակ պահպանելով Հայաստանի բնիկ էկոհամակարգը: Ապագայի հույսով կանաչապատում իրականացնելով՝ «Էյ Թի Փի»-ն ստեղծում է տնտեսական հնարավորություններ, հզորացնում սահմանամերձ գյուղերը և հարստացնում Հայաստանի բնությունը:

Ավելին՝ *https://www.armeniatree.org/*

© DiasporArm

Վայրի կենդանիների փրկարար կենտրոնը (WRC) Հայաստանում առաջին հաստատությունն է, որը փրկում և խնամում է Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներին: 2016 թվականից այն համագործակցում է պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ՝ պայքարելով վայրի կենդանիներին անազատ պայմաններում ապօրինի պահելու և դրանց առևտրի դեմ:

Կենտրոնի կարևոր ծրագրերից մեկը առանցքային ուշադրություն է դարձնում Կարմիր գրքում գրանցված գորշ արջերի փրկությանը, օրենսդրական բարեփոխումների խթանմանը, ինչպես նաև արգելավայրերին և վնասված կենդանիներին վայրի բնություն հետ վերադարձնելու կենտրոններին: Կրթական նախաձեռնությունների և շահերի պաշտպանության միջոցով WRC-ն պայքարում է կենդանիների հանդեպ դաժանության ու դրանց շահագործման դեմ՝ նպաստելով Հայաստանի վայրի բնության ավելի անվտանգ ապագային:

Ավելին՝ https://wrc.am/en/

© Ռոջեր Ալլեն, Daily Mail

Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանը (CWR) Հարավային Կովկասի առաջին մասնավոր պահպանվող տարածքն է, որն ունի 30,000 հա մակերես: 2011 թվականից այն դարձել է կարևոր կենսամիջավայր կենդանիների այնպիսի վտանգված տեսակների համար, ինչպիսիք են կովկասյան ընձառյուծները, բեզոարյան այծերը և գորշ արջերը: Այն միաժամանակ աջակցում է նաև «Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանմանը:
Բարձր տեխնոլոգիական թակարդ-տեսախցիկների և հեռահար մշտադիտարկման համակարգերի միջոցով CWR-ն ապահովում է վայրի բնության շուրջօրյա պաշտպանություն, վերահսկում կենդանիների բազմացման աճը և պայքարում որսագողության դեմ: Շնորհիվ CWR-ի՝ վայրի բնության պահպանմանն ուղղված այս ջանքերի Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների մոտ զգալի աճ է գրանցվել:

Ավելին՝ http://cwr.fpwc.org/

© Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան

«Լաթե»-ն (LATE) տեքստիլի վերամշակման նախաձեռնություն է Հայաստանում, որը խթանում է կայունություն և սոցիալական պատասխանատվություն: Հավաքելով և վերամշակելով տեքստիլ թափոնները և օգտագործված հագուստը՝ «Լաթե»-ն նվազեցնում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը՝ միաժամանակ աջակցելով կարիքավոր համայնքներին:
Հայաստանում նորաձևության կայուն էկոհամակարգ զարգացնելու համար նախաձեռնությունը համագործակցում է տեղական կազմակերպությունների հետ՝ խթանելով էկոլոգիապես մաքուր գործելակերպ և շրջանաձև տնտեսության լուծումներ:

© LATE

Քաղաքացիական ներգրավվածության այլ հաջողված օրինակներ.

- **«Restart» նախաձեռնությունը** 2017 թվականին ակտիվորեն պաշտպանում էր ուսանողների՝ կրթական հիմքով տրվող տարկետման իրավունքը:
- **«Քաղաքացի դիտորդներ»** նախաձեռնությունը ընտրությունները վերահսկելու համար հաջողությամբ մոբիլիզացրել է հազարավոր քաղաքացիների՝ ապահովելով թափանցիկության ավելի բարձր մակարդակ և նվազեցնելով ընտրակեղծիքների քանակը:
- **«#Էլեկտրիկ Երևան»-ը** 2015 թվականին Հայաստանում զանգվածային բողոքի շարժում էր՝ ընդդեմ էլեկտրաէներգիայի թանկացմանը, և պայմանավորված էր կոռուպցիայի և տնտեսական դժվարությունների շուրջ մտահոգություններով: Այն հանգեցրեց ոստիկանության հետ բախումների և կառավարության կողմից մասնակի զիջումների գնալուն:
- **«Վճարում ենք 100 դրամ»** շարժման արդյունքում 2013 թվականին հաջողությամբ կանխվեց Երևանում տրանսպորտի ուղեվարձի թանկացումը բողոքի ակցիաների և քաղաքացիական ակտիվիզմի շնորհիվ:
- **«Երիտասարդների մասնակցության խթանումը Հայաստանում քաղաքականությունների մշակման գործընթացում»** ծրագիրը գործարկվել է Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների միության կողմից: Այն ընգրկում է երիտասարդական ուղղվածություն ունեցող յոթ հասարակական կազմակերպություն և նպատակ ունի ուժեղացնելու երիտասարդների ներգրավվածությունը կառավարման հարցերում՝ նպաստելով նրանց կարողությունների զարգացմանը, ոլորտային քաղաքականությունների շուրջ երկխոսությանը և շահերի պաշտպանությանը, միաժամանակ անդրադառնալով երիտասարդների մասնակցության խոչընդոտներին և խթանելով քաղաքացիական ակտիվ ներգրավվածությունը:

Հաջողակ հանրային քարոզարշավը կարող է բաղկացած լինել ինչպես փոքր նախաձեռնություններից (օրինակ՝ մայթերի ազատում ապօրինի շինություններից, բանավեճի կազմակերպում, դպրոցում հեծանիվների կայանատեղիի ստեղծում, օդի որակի սենսորների տեղադրում և այլն), այնպես էլ մեծամասշտաբ կամ բազմազան գործողություններից: Ամեն ինչ կախված է ձեր կարիքներից:

Մաս 2. Կլիմայի փոփոխությունն ու երիտասարդների ներգրավվածությունը

2.1 Ի՞նչ է կլիմայի փոփոխությունը

Ցուցում. Այցելե՛ք Mentimeter կայք և մուտքագրե՛ք հետևյալ հարցերը՝ դրանք «բառի ամպ»-ի տեսքով ներկայացնելու համար.

- Ի՞նչ քայլ կարող են երիտասարդները նախաձեռնել՝ կլիմայական արդարություն հաստատելու համար:
- Ձեր համայնքում որևէ փոփոխություն նկատե՞լ եք՝ կապված կլիմայի փոփոխության հետ:
    - Մասնակիցների հետ կիսվե՛ք Mentimeter-ի հղումով կամ QR կոդով և էկրանի վրա ցուցադրե՛ք ստեղծված «բառի ամպ»-ի արդյունքները:
    - Մասնակիցների պատասխանները կապե՛ք երիտասարդական կլիմայական ակտիվ նախաձեռնությունների հետ (Ուրբաթները ապագայի համար (Fridays for Future), տեղական աղբահավաքի արշավներ, ծառատունկի ծրագրեր):
    - Հարցրե՛ք մասնակիցներին. դուք երբևէ մասնակցե՞լ եք կլիմայի խնդիրների հետ կապված որևէ նախաձեռնության: Ի՞նչ փորձառություն եք ունեցել:
    - Ամփոփե՛ք՝ հիշեցնելով, որ երբ փոքրամասշտաբ գործողությունները բազմապատկվում են, դրանք կարող են հանգեցնել էական փոփոխությունների:

2.2 Ի՞նչ է կլիմայի փոփոխությունը

Ցուցում. Ներկայացրե՛ք հետևյալ սահմանումը և ցուցադրե՛ք ստորև ներկայացված նկարը.

Կլիմայի փոփոխությունն առաջ է գալիս ջերմաստիճանի և եղանակային օրինաչափությունների երկարատև փոփոխություններից, որոնք կարող են պայմանավորված լինել՝

- Բնական գործոններով (օրինակ՝ արեգակնային ակտիվություն, հրաբխային ժայթքումներ)

- Մարդկային գործոններով (օրինակ՝ հանածո վառելիքի այրում, անտառահատում):

Արդյունաբերական հեղափոխությունից ի վեր մարդկային գործունեությունը դարձել է կլիմայի փոփոխության գլխավոր պատճառը՝ հիմնականում հանածո վառելիքի՝ ածխի, նավթի և գազի այրման հետևանքով:



2.3 Կլիմայի փոփոխություն. բացատրություն

Ցուցումներ. Դիտե՛ք հետևյալ **տեսանյութը.**

Տեսանյութը դիտելուց հետո խնդրե՛ք մասնակիցներին իրենց բառերով բացատրեն՝ ինչ է կլիմայի փոփոխությունը:

Այժմ եկե՛ք ուսումնասիրենք այն հիմնական հասկացությունները, որ ազդում են թե՛ անհատների, թե՛ համայնքների վրա: Դրանք են՝ **սննդային թափոնները**, **էներգաարդյունավետությունը** և **ֆասթ ֆեշնը**: Այս խնդիրները ձևավորում են մեր առօրյա կյանքը, բայց ինչպե՞ս կարող ենք դրանց ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկել: Միասին կքննարկենք դրանց ազդեցությունը և լուծումների տարբերակները՝ ավելի կայուն ապագա կերտելու մեջ իրապես ներգրավված լինելու համար:

2.4 Սննդային թափոններ. բացատրություն

Ցուցում. Ներկայացրե՛ք հետևյալ բացատրությունը.

Սննդային թափոնը ցանկացած սննդամթերքը և (կամ) ուտելու ոչ ենթակա մթերքն է, որ դուրս է գալիս կամ վատնվում է սննդային շղթայում և որը անհրաժեշտ է վերամշակել կամ օտարել (օրինակ՝ կոմպոստացման, անաէրոբ քայքայման, կենսաէներգիայի արտադրության, ջերմային այրման կամ օրգանական թափոնների պահեստավորման միջոցով):



Աղբյուր՝ Eurostat. Food waste in the EU by main economic sectors, 2022

Սննդային թափոնների ազգային տվյալներ (Հայաստան)

Ցուցում. Ներկայացրե՛ք և քննարկե՛ք հետևյալ վիճակագրությունը.

- Հայաստանում առկա սննդամթերքի 5%-ը վատնվում է: Շուկաների և պահեստավորման համապատասխան սարքավորումների բացակայության պատճառով կորուստներն առավելագույնն են բանջարեղենի (21%), սեխի (15%) և կարտոֆիլի (8,5%) դեպքում:
- Ոչ պաշտոնական և պաշտոնական տվյալների համաձայն՝ աղբավայրերում հայտնվող թափոնների մոտ 50%-ը օրգանական է:
- Հայաստանում բնակչության 32%-ը աղքատ է, իսկ 20%-ը՝ պարենապես անապահով: Բնակավայրի տեսակի մակարդակով արված վերլուծությունը ցույց է տվել, որ պարենային անապահովության մակարդակն ավելի բարձր է գյուղական (24%) և այլ քաղաքային (19%) բնակավայրերում՝ ի տարբերություն Երևանի (9%):

Աղբյուրներ՝
National Strategic Review of Food Security and Nutrition
United Nations World Food Programme (WFP) in Armenia, January 2018
https://docs.wfp.org/api/documents/WFP-0000104914/download/#page=30

Food Security and Vulnerability Assessment in Armenia
United Nations World Food Programme (WFP) in Armenia, March 2024
https://www.wfp.org/publications/food-security-and-vulnerability-assessment-armenia

2.5 Էներգիայի արդյունավետություն. բացատրություն

Ցուցում. Ներկայացրե՛ք հետևյալ բացատրությունը.

Էներգիայի արդյունավետությունն ավելի քիչ էներգիայի օգտագործումն է՝ միևնույն ծառայությունն ապահովելու համար: Օրինակ՝ գրեթե բոլորս ծորակի ջուրը բաց ենք թողնում ատամները խոզանակելիս, կամ չենք անջատում լույսերը սենյակից դուրս գալիս: Լավ լուրն այն է, որ եթե հետևենք այս հասարակ կանոններին, կարող ենք մեր իսկ տանը մինչև 40% էներգիա խնայել:

2.6 Խորհուրդներ և հնարքներ՝ էներգիա խնայելու համար

Ցուցում. Համառոտ ներկայացրե՛ք հետևյալ օրինակները և ցուցադրե՛ք ստորև բերված նկարները.

Ննջասենյակ

- Օգտագործե՛ք LED լամպեր, քանի որ դրանք ավելի երկար են ծառայում և սպառում են մինչև 80% պակաս էներգիա, քան շիկացման լամպերը:
- Անջատե՛ք լույսերը սենյակից դուրս գալիս:
- Խելամտորեն օգտագործե՛ք թերմոստատը. ջերմաստիճանը ընդամենը 1°C իջեցնելով՝ կարող եք խնայել էներգիայի մոտ 7%-ը:



Լոգասենյակ

- Օդափոխիչը միացրե՛ք միայն անհրաժեշտության դեպքում. դա թույլ է տալիս խնայել ջուր և էներգիա:
- Նախապատվությու՛ն տվեք արագ ցնցուղ ընդունելուն լոգանքի փոխարեն. ջրի ցածր շիթով լոգանքի ցնցուղը կարող է կրճատել ջրի սպառումը 25-60%-ով:
- Ջուրը բաց մի՛ թողեք ատամները խոզանակելիս կամ ձեռքերը լվանալիս. այդպես կարող եք շաբաթական մի քանի տասնյակ լիտր ջուր խնայել:

Հյուրասենյակ

- Օդորակիչը 1°C-ով բարձրացրե՛ք՝ էլեկտրաէներգիայի սպառումը 10%-ով նվազեցնելու համար:
- Ամռան տապին օգտագործե՛ք շերտավարագույրներ և վարագույրներ, որոնք կպաշտպանեն արևի ոչ ցանկալի ճառագայթներից:
- Արևոտ օրերին առավելագույնս օգտվե՛ք բնական լույսից՝ արհեստական լուսավորության կարիքը 16-20%-ով նվազեցնելու համար:

Խոհանոց

- Էներգիայի սպառումը նվազեցնելու համար ընտրե՛ք էներգիա խնայող սարքեր (A դաս):
- Կրճատե՛ք գազօջախին դրված կաթսայի եռման ժամանակը 50%-ով՝ այն կափարիչով ծածկելով:
- Լվացքի մեքենայի ջերմաստիճանը դրե՛ք 30°C վրա և մի՛ օգտագործեք չափազանց շատ լվացող միջոց, քանի որ դա կարող է երկարացնել ողողման ցիկլը:

Ավելին՝
https://www.seai.ie/sites/default/files/publications/SEAI-ReduceYourUse-Booklet.pdf

2.7 Ֆասթ ֆեշն. բացատրություն

Ցուցում. Ներկայացրե՛ք հետևյալ բացատրությունը և ցույցադրե՛ք ստորև բերված նկարը.

Ֆասթ ֆեշն (արագ նորաձևություն). «Ֆասթ ֆեշն»-ն այն է, ինչ մենք անվանում ենք հագուստի հսկայական (իսկապես ՀՍԿԱՅԱԿԱՆ) ծավալների արագ և էժան դիզայն, արտադրություն և մարկետինգ: Հագուստի արտադրության այս եղանակը հաճախ հենվում է ցածրորակ նյութերի վրա և շահագործում է այլ երկրներից ցածր վարձատրվող աշխատուժ:

Ավելին՝
https://www.greenpeace.org/aotearoa/story/the-dark-side-of-fast-fashion/#WhatIsFastFashion

Ֆասթ ֆեշն հագուստի ողբերգական ավարտը

Երեխայի աշխատանք. տեքստիլ գործարանում աշխատող երեխա

Լրացուցիչ տեղեկությունների համար դիտե՛ք հետևյալ տեսանյութերը՝

- Ֆասթ ֆեշնի ի հայտ գալը. աճող արդյունաբերության հետևանքները՝ https://www.youtube.com/watch?v=anxQSEYe_xw&ab_channel=GreenMatchUK
- Ֆասթ ֆեշնի ազդեցությունը շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վրա՝ https://www.youtube.com/watch?v=H_xlJelpKtA&ab_channel=GrantGilmore

2.8 Կլիմայի փոփոխության տերմինների բառարան (ինտերակտիվ ուսումնական խաղ)

Ցուցում. Կլիմային առնչվող տերմինների՝ չորս բաժնից բաղկացած աղյուսակ գծե՛ք.

1. **Կլիմայական երևույթներ՝** գլոբալ տաքացում, անոմալ շոգ, ծովի մակարդակի բարձրացում, անապատացում
2. **Մարդածին գործոններ՝** անտառահատումներ, օդի աղտոտվածություն, ածխածնի հետք, հանածո վառելիք
3. **Բնական գործընթացներ՝** ջերմոցային էֆեկտ, օզոնային շերտ, ֆոտոսինթեզ, օվկիանոսային հոսանքներ
4. **Լուծումներ՝** վերականգնվող էներգիայի աղբյուրներ (արևային, քամու, ջրային), անտառապատում, էներգաարդյունավետություն, թափոնների վերամշակում (վերջինս անգլերենում ընդունված 5 R-ի շարքից է՝ հրաժարում (refuse), վերօգտագործում (reuse), վերանորոգում (repair), վերապրոֆիլավորում (repurpose))

Ցուցումներ. Մասնակիցների հետ կիսվե՛ք աղյուսակի հղումով՝ օգտագործելով Kahoot հարթակը կամ Mentimeter կայքը:

Բացատրե՛ք կանոնները.

- Դասընթացավարն ընթերցում է որևէ տերմինի սահմանում կամ դրա հետ կապված օրինակներ է բերում:
- Տերմիններն անմիջապես անվանելու փոխարեն մասնակիցները պետք է կռահեն ճիշտ տերմինը աղյուսակից: Օրինակ՝ *այս տերմինը վերաբերում է անհատի կամ կազմակերպության կողմից արտանետված ջերմոցային գազերի ընդհանուր քանակին (պատասխան՝ ածխածնի հետք):*
- Առաջինը ճիշտ կռահած մասնակիցը/խումբը վաստակում է մեկ միավոր:

Խաղի ընթացքը.

- Բաժանե՛ք մասնակիցներին 4 թիմի. յուրաքանչյուր թիմ պետք է աշխատի մեկ բաժնի վրա:
- Շրջե՛ք թիմերում և յուրաքանչյուրին հնարավորություն տվեք պատասխանելու իրենց բաժնին վերաբերող սահմանմանը:

- Եթե թիմերը վստահ չեն իրենց պատասխանի վրա, խրախուսե՛ք, որ քննարկեն և թիմային աշխատանք կատարեն:

Ամփոփում և քննարկում.

- Խաղից հետո մասնակիցներին խնդրե՛ք իրենց մտքերը ներկայացնեն՝ օգտվելով Mentimeter կայքից կամ Google Doc փաստաթղթից: Ո՞ր տերմիններն էին ձեզ ավելի ծանոթ: Ո՞ր հասկացությունների համար ավելի մանրամասն բացատրության կարիք կար: Ինչպե՞ս են այս տերմիններն առնչվում կլիմայական արդարությանը և երիտասարդների ներգրավվածությանը:

- Քննարկե՛ք, թե ինչպես է այս հասկացությունների ընկալումը օգնում երիտասարդներին կլիմայի խնդիրների դեմ քայլեր ձեռնարկելու գործում: Ամփոփե՛ք, թե ինչ նոր բան սովորեցին մասնակիցները և կապեք դրանք իրական խնդիրների հետ (օրինակ՝ ինչպես է օդի աղտոտվածությունը ազդում առողջության վրա, անտառապատման կարևորությունը և այլն):

2.9 ԵՄ-ի՝ կլիմայի ոլորտի նպատակները

Ցուցում. Ներկայացրե՛ք և քննարկե՛ք հետևյալ վիճակագրությունը.

«Եվրոպական կանաչ գործարք»-ը (European Green Deal) ԵՄ-ի համապարփակ ռազմավարությունն է, որի նպատակն է մինչև 2050 թվականը Եվրոպան դարձնել առաջին կլիմայական չեզոք մայրցամաքը:

Կլիմայական չեզոքության հասնելու համար ԵՄ-ն **երեք հիմնական նպատակ** է սահմանել.

2030 թվականի նպատակ. Նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները առնվազն **55%**-ով՝ համեմատած 1990 թվականի ցուցանիշների հետ:

Այս նպատակին հասնելու համար ԵՄ անդամ պետությունները պետք է մշակեն **Ազգային էներգետիկայի և կլիմայի ծրագրեր (NECPs)**՝ առանցքում ունենալով հետևյալ ուղղությունները.

- Արտանետումների նվազեցում և վերականգնվող էներգիայի աճի խթանում.
  - Բնակարաններում և ձեռնարկություններում արևային վահանակների տեղադրման համար ֆինանսական աջակցություն տրամադրելով:
- Էներգետիկ անվտանգության ապահովում (կայուն էներգիայի մատակարարում)
  - Գազի մատակարարման տարբեր աղբյուրներ ապահովելով՝ միայն մեկ մատակարարից կախված չլինելու համար, ինչպես ԵՄ երկրներն արեցին մինչև Ռուսաստանի ներխուժումը Ուկրաինա:
- Էներգաարդյունավետության բարձրացում (նույն գործընթացի համար ավելի քիչ էներգիայի սպառում)
  - Հետևելով վերոնշյալ խորհուրդներին ու հնարքներին՝ ավելի լայն մասշտաբով:

- Ավելի կայուն ներքին էներգետիկ շուկայի ձևավորում (ԵՄ-ում էներգիայի առևտրի հեշտացում)
    - Ավելի շատ միջսահմանային էներգետիկ ցանցեր կառուցելով, օրինակ՝ Ֆրանսիա-Իսպանիա էլեկտրաէներգիայի կապի նման նախագծերի իրականացում:
- Հետազոտությունների, նորարարության և մրցունակության զարգացման մեջ ներդրումների կատարում.
    - Էներգետիկայի թվայնացումը խթանելով, օրինակ՝ արհեստական բանականության (AI) վրա հիմնված էներգիայի կառավարման համակարգերի ներդրում:

2040 թվականի նպատակ. Ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնել **90%**-ով:
2050 թվականի նպատակ. Հասնել **զրոյական արտանետումների մակարդակի** և դառնալ կլիմայական չեզոք մայրցամաք:

2.10 Կլիմայի և երիտասարդության վերաբերյալ ընթացիկ տվյալներ

Ցուցում. Ներկայացրե՛ք հետևյալ վիճակագրությունը.

- Հայաստանցի դեռահասների 67,9%-ը և մեծահասակների 66%-ը խիստ մտահոգված են իրենց համայնքներում կլիմայի փոփոխությամբ:

- Դեռահասների 90%-ը հետաքրքրված է կլիմայի փոփոխության մասին ավելի շատ տեղեկություն ստանալով՝ նախապատվությունը տալով իրենց դպրոցի ուսուցիչներին ու տնօրինությանը՝ որպես տեղեկատվության հիմնական աղբյուր:

- Դեռահասների 76%-ը և մեծահասակների 77%-ը պատրաստ են քայլեր ձեռնարկել՝ կանխելու կամ նվազեցնելու կլիմայի փոփոխության ազդեցությունը իրենց համայնքներում, եթե անգամ դրա համար պահանջվի որոշ անձնական սովորությունների փոփոխություն:

- Հայաստանցի դեռահասների 96,2%-ը լսել է կլիմայի փոփոխության մասին՝ ի տարբերություն մեծահասակների 79,8%-ի, որոնք չեն լսել դրա մասին:

- Երկիր մոլորակի կլիմայի և եղանակի օրինաչափությունների փոփոխության մասին հայաստանցի դեռահասների 68,4%-ը տեղեկացել է դպրոցում, 43,7%-ը՝ հեռուստատեսությամբ, իսկ 35,5%-ը՝ համացանցից: Մեծահասակների 81,9%-ը այդ տեղեկությունը ստացել է հեռուստատեսությամբ, 44,8%-ը՝ համացանցից, իսկ 34,7%-ը՝ սոցիալական ցանցերից:

- Հայաստանցի դեռահասների 67,9%-ը և մեծահասակների 66%-ը շատ մտահոգված են կլիմայի փոփոխությամբ՝ իրենց համայնքի մասշտաբով, մինչդեռ դեռահասների 58,4%-ը և մեծահասակների 70,3%-ը խիստ մտահոգված են կլիմայի փոփոխությամբ՝ Հայաստանի մասշտաբով:

Աղբյուրներ՝
Climate change and adolescent participation in Armenia
UNICEF Armenia 2022
https://www.unicef.org/armenia/en/reports/climate-change-and-adolescent-participation-armenia

Հարցրեք մասնակիցներին.

- Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են երիտասարդներն ավելի շատ մտահոգված կլիմայի փոփոխությամբ, քան տարեցները:

- Դեռահասների 76%-ը և մեծահասակների 77%-ը պատրաստ են քայլեր ձեռնարկել՝ կանխելու կամ նվազեցնելու կլիմայի փոփոխության ազդեցությունը իրենց համայնքներում, եթե անգամ դրա համար պահանջվի հրաժարվել որոշ անձնական սովորություններից: Համաձա՞յն եք սրա հետ: Թե՛ դրական, թե՛ բացասական պատասխանի դեպքում բացատրե՛ք, թե ինչու եք այդպես կարծում:

2.11 Հայաստանցիների վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ

Ցուցում. Ներկայացրե՛ք հետևյալ վիճակագրությունը.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ ընկալումներ

- Հայաստանցիների 61%-ը մեծապես մտահոգված է կլիմայի փոփոխությամբ և երկրի վրա դրա ունեցած ազդեցությամբ, ինչն ընդգծում է հասարակության՝ բնապահպանական խնդիրների մասին բավականին իրազեկված լինելու փաստը:

- 65%-ը համոզված է, որ կլիմայի փոփոխության կանխարգելմանը միտված քայլեր ձեռնարկելը շատ կարևոր է՝ ընդգծելով լուծումների կարևորությունը:

- Կայուն լուծումների վերաբերյալ հարցման ժամանակ 62%-ը առաջին տեղում նշել է արևային էներգիան, այնուհետև՝ հողմային էներգիան (39%) և հիդրոէներգիան (34%)՝ որպես Հայաստանի ապագայի վերականգնվող էներգիայի հիմնական աղբյուրներ:

- 72%-ը աջակցում է ծառատունկերին, մինչդեռ ներկայումս միայն 4%-ն է հեծանիվ վարում մեքենաների կամ հասարակական տրանսպորտի փոխարեն, ինչը ցույց է տալիս, որ էկոլոգիապես գիտակցված սովորություններ զարգացնելու կարիք կա:

Ի՞նչ է շրջանաձև տնտեսությունը: Գործնականում այն ենթադրում է նվազագույն մակարդակի հասցնել թափոնները: Երբ ինչ-որ ապրանք հասնում է իր կյանքի ավարտին, դրա բաղկացուցիչ նյութերը հնարավորության դեպքում պահվում են տնտեսության մեջ վերամշակման շնորհիվ: Դրանք կարող են արդյունավետորեն օգտագործվել նորից ու նորից՝ դրանով իսկ ստեղծելով շարունակական արժեք:

Դիտե՛ք հետևյալ տեսանյութը և ցուցադրե՛ք ստորև բերված նկարը:

Շրջանաձև տնտեսությունը հետևյալն է.

- Հայաստանը խստացնում է թափոնների կառավարման օրենքները՝ ներառելով Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (EPR) օրենսդրությունը, որը կպարտավորեցնի արտադրողներին պատասխանատվություն կրել իրենց արտադրանքի սպառումից հետո առաջացած թափոնների համար: Բացի դրանից՝

շրջակա միջավայրի վնասը նվազեցնելու նպատակով երկրում արգելվել է 50 միկրոնից բարակ պոլիէթիլենային տոպրակների օգտագործումը:

- Միջոցներ են ձեռնարկվում՝ թափոնների կառավարման կանոնակարգերը լավարկելու և աղբի համար չնախատեսված վայրերում աղբ նետելու դեմ պայքարելու համար, սակայն դրանց գործադրումը շարունակվում է ուղեկցվել դժվարություններով: «Յակոբեան» բնապահպանական կենտրոնի նման կազմակերպությունները ակտիվորեն աշխատում են այս ոլորտում քաղաքականության բարեփոխումների վրա:

- Բնության վերականգնումը՝ դրա պահպանությանն ուղղված նախաձեռնությունների միջոցով. Հայաստանում իրականացվում են անտառների վերականգնման և կենսաբազմազանության պահպանման մի շարք ծրագրեր, այդ թվում՝ «Էյ Թի Փի»-ի և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) կողմից, որոնց նախաձեռնություններն ուղղված են բուսական ու կենդանական վտանգված տեսակների պաշտպանությանը և բնական միջավայրերի վերականգնմանը:

- «EU4Environment»-ի և «CirculUPCirculUP!»-ի նման նախաձեռնությունները նպաստում են Հայաստանում կայուն տեխնոլոգիաների, էկոլոգիապես պատասխանատու բիզնեսի և շրջանաձև տնտեսության մոդելների զարգացմանը:

- Տարբեր հասարակական կազմակերպություններ և հաստատություններ ակտիվորեն նպաստում են կլիմայի փոփոխությանն ու թափոնների նվազեցմանն ուղղված կրթությանը՝ իրականացնելով հանրային քարոզարշավներ՝ վերամշակման և կայուն սպառման թեմաներով:

- Հայաստանը գործարկել է բնապահպանական հարկեր՝ նվազեցնելու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները՝ հիմնականում թիրախավորելով օդի աղտոտվածությունը, թափոնների կառավարումը և արդյունաբերական արտանետումները:

- Հայաստանը վերանայել է տրանսպորտային միջոցների հետ կապված բնապահպանական հարկերը՝ խրախուսելու ավելի մաքուր փոխադրումները, իսկ էլեկտրական մեքենաների համար հարկային արտոնություններն ուժի մեջ են մտել 2024 թվականից:

Եվրոպացիները, հատկապես երիտասարդները, գնալով ավելի են գիտակցում, որ բնապահպանական խնդիրները ազդում են իրենց առողջության և առօրյա կյանքի վրա: Նրանց առաջնահերթությունները կենտրոնանում են գործնական լուծումների վրա, ինչպիսիք են շրջանաձև տնտեսության նախաձեռնությունները, ավելի ուժեղ կանոնակարգերը և բնության վերականգնումը՝ կարևորելով ոլորտային քաղաքականության վրա հիմնված գործողությունների և քաղաքացիների ներգրավվածության անհրաժեշտությունը՝ արդյունավետ փոփոխություններ առաջ քաշելու համար:

Աղբյուր՝
Public opinion survey on climate change and renewable energy in Armenia
Westminster Foundation for Democracy, 2022
https://www.wfd.org/what-we-do/resources/public-opinion-survey-climate-change-and-renewable-energy-armenia

2.12 Կլիմայի փոփոխության ազդեցությունները երեխաների վրա

Ցուցում. Ներկայացրե՛ք հետևյալ վիճակագրությունը.

- Հայաստանը խիստ խոցելի է կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ՝ կապված **դպրոց հաճախելու, առողջության և հոգեկան բարեկեցության** մտահոգությունների հետ, որոնք պայմանավորված են ծայրահեղ եղանակային պայմանների՝ անոմալ շոգերի, երաշտների և ջրհեղեղների հետ:
- **Երեխաների 45,7%**-ը կլիմայի փոփոխության ազդեցությունն իրենց կյանքի որակի վրա ընկալում է որպես **«հիմնականում բացասական»**, ինչն անմիջապես մտահոգություններ է առաջ բերում՝ թերսնման, հիվանդությունների և հողի որակի վատթարացման հետ կապված:
- **Երեխաների 45,7%**-ը նշել է, որ կլիմայի փոփոխությունն անմիջական ազդեցություն ունի **դպրոց հաճախելու վրա**, հատկապես եղանակային ծայրահեղ պայմանների ժամանակ, ինչպիսիք են առատ ձյունը և անոմալ շոգը:
- **Հարցված երեխաների 71,7%**-ը բնակվում է գյուղական տարածքներում, որտեղ կրթության հասանելիության համար լրացուցիչ խոչընդոտ են հանդիսանում վատ ենթակառուցվածքները և հաճախակի պատահող բնական աղետները՝ սողանքները և սելավները:
- **Անոմալ շոգն** ու **երաշտը** Հայաստանում երեխաների վրա ազդող ամենամեծ կլիմայական վտանգներն են, որոնց հետևանքով դպրոցները կարող են փակվել և ի հայտ գալ առողջական խնդիրներ, ինչպիսիք են գլխացավերը և ծայրահեղ ջերմաստիճաններին հարմարվելու դժվարությունները:
- **Դեռահասներին** անհանգստացնում է **գլոբալ տաքացման** ազդեցությունը իրենց կրթության վրա. նրանց **40,6%**-ը նշում է, որ եղանակային ծայրահեղ պայմանները խանգարում են իրենց՝ կանոնավոր դպրոց հաճախելուն:
- Հայաստանում **երեխաների 30,4%**-ը գիտակցում է, որ կլիմայի փոփոխությունն ազդում է իրենց կրթության հասանելիության վրա, իսկ **վտանգավոր աշխատատեղերի և տնտեսական անկման** մասին մտահոգություններն ավելի են սրում իրավիճակը:

Աղբյուրներ՝
Climate Landscape Analysis for Children in Armenia
UNICEF Working Paper, April 2018
https://www.unicef.org/armenia/media/1926/file/Climate%20landscape%20analysis%20for%20children%20in%20Armenia%20.pdf?utm_source=chatgpt.com

Learning to see the climate crisis: Children and Young People's Perceptions of Climate Change and Environmental Transformation in Armenia
World Vision Armenia, 2023
https://www.wvi.org/sites/default/files/2024-01/Climate%20change%20research%20Armenia.pdf?utm_source=chatgpt.com

2.13 Կոտրելով «Եվրոպական կանաչ գործարք»-ի մասին միֆերը

Հարցրեք մասնակիցներին. Լսե՞լ եք որևէ միֆ կամ ապատեղեկատվություն «Եվրոպական կանաչ գործարք»-ի մասին:

Հուշում. Բացատրե՛ք, որ սխալ ընկալումները կարող են արագ տարածվել, ուստի կարևոր է ստուգել փաստերը՝ հիմնավորված որոշումներ կայացնելու համար:

Մտագրոհ միֆերի վերաբերյալ

Ցուցումներ. Գրատախտակի վրա գրե՛ք կամ թվային գործիքի (օրինակ՝ Mentimeter կայք կամ Padlet հարթակ) վրա հավաքե՛ք մասնակիցների պատասխանները: Խրախուսե՛ք նրանց կիսվել այնպիսի բամբասանքներով, սոցիալական ցանցերի պնդումներով կամ հայտարարություններով, որոնք լսել են ԵՄ կլիմայի քաղաքականության մասին:

Ներկայացրե՛ք տարածված միֆերի ցանկը և բացահայտե՛ք դրանց հիմքում ընկած փաստերը.

1. **Միֆ**. ԵՄ-ն մեզ ստիպում է միջատներ ուտել:
   Ճշմարտություն. ԵՄ-ն պարզապես վերահսկում է միջատների հիմքով սնունդը, որպեսզի նրանք, ովքեր ցանկանում են դրանցից օգտվել, չվնասվեն: Սա ԵՄ-ի՝ սննդամթերքի մատակարարման շղթայի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունը նվազեցնելու ավելի ընդգրկուն ռազմավարության մի մասն է (Euronews):

2. **Միֆ**. Անցումը կանաչ ապրելակերպին չափազանց թանկ է:
   Ճշմարտություն. Աձխից ստացվող էներգիայի արտադրությունը արդյունավետ է 35%-ով, այսինքն՝ էներգիայի 65%-ը վատնվում է արտադրության և տեղափոխման մեջ: Ի տարբերություն սրան՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիան գործնականում 100% արդյունավետ է վերջնական օգտագործման փուլում և կարող է արտադրվել և կառավարվել տեղում (World Economic Forum):

3. **Միֆ**. Կլիմայի փոփոխությունը միշտ էլ եղել է, ուստի մենք չպետք է դրա համար անհանգստանանք:
   Ճշմարտություն. Վերջին առնվազն 2000 տարվա ընթացքում Երկիր մոլորակը տաքանում է ամենաարագ տեմպով, և այժմ այն մոտ 1,2°C-ով ավելի տաք է, քան նախաարդյունաբերական տարիներին: Վերջին տասը տարին պատմության մեջ ամենաշոգ տարիներն են եղել, իսկ 2023-ը գերազանցել է գլոբալ ջերմաստիճանի ռեկորդները:

4. **Միֆ.** Կարիք չկա, որ մենք անհանգստանանք ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման համար: Մենք կարող ենք պարզապես հարմարվել կլիմայի փոփոխությանը:
   Ճշմարտություն. Աշխարհի բոլոր զարգացող երկրներին միասին տարեկան 215-ից մինչև 387 միլիարդ ԱՄՆ դոլար է անհրաժեշտ՝ կլիմայի փոփոխությանը հարմարվելու համար: Նույնիսկ հարուստ երկրները կդժվարանան իրենց թույլ տալ հարմարվողականության ծախսերը, ինչը որոշ դեպքերում կհանգեցնի արմատական քայլերի, ինչպիսիք են խոցելի համայնքների տեղահանումը, կենսական նշանակության ենթակառուցվածքների տեղափոխումը կամ հիմնական սննդի փոփոխությունը (UNEP):

Հարցրե՛ք մասնակիցներին. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են այս միֆերը տարածվում: Որտե՞ղից են մարդիկ սովորաբար ապատեղեկատվություն ստանում կլիմայի քաղաքականության վերաբերյալ: Ինչպե՞ս կարող են երիտասարդները փաստերը ստուգել և պայքարել ապատեղեկատվության դեմ:
Ավարտե՛ք՝ ընդգծելով, որ փաստերի վրա հիմնված քննարկումները համայնքներին հնարավորություն են տալիս քայլեր ձեռնարկել և կլիմայի քաղաքականության վերաբերյալ բովանդակալից բանավեճերի մեջ ներգրավվել:

2.14 Հիմա Ձեր մասնակցության հերթն է. գործնական աշխատանք

Ցուցումներ.

- Խնդրե՛ք մասնակիցներին իրենց սարքերով բացել ֆասթ ֆեշնի հետքի (Fast Fashion Footprint) վիկտորինան՝ https://www.thredup.com/fashionfootprint/?srsltid=AfmBOooBaraTraK77Z5sXsZrQ5Vt9jt0d2Hhv8zxUU9GHMXsnT66cyAx:
- Նրանց 5 րոպե տվեք՝ հարցերին պատասխանելու համար:
- Եթե սարքերի քանակը սահմանափակ է, նրանք կարող են մասնակցել վիկտորինային զույգերով կամ փոքր խմբերով՝ միասին քննարկելով իրենց պատասխանները:
- Երբ բոլորն ունենան իրենց արդյունքները, հարցրե՛ք.
    - Ձեզ զարմացրե՞ց արդյոք նորաձևության ոլորտում ձեր ունեցած հետքը: Թե՛ դրական, թե՛ բացասական պատասխանի դեպքում խնդրում ենք բացատրել, թե ինչու:
    - Ո՞ր սովորություններն են ամենաշատը ազդում ձեր՝ նորաձևության վրա ունեցած հետքի վրա:
    - Նորաձևության ի՞նչ կայուն տարբերակներ կարող եք ընտրել՝ ձեր ունեցած ազդեցությունը նվազեցնելու համար:
- Թվարկե՛ք այնպիսի գործնական լուծումներ, որոնք մասնակիցները կարող են ընդունել:

Գործնական լուծումներ՝

- Գնել օգտագործված հագուստ կամ սեփականը մեկ ուրիշի հետ փոխանակել,
- Նախապատվությունը տալ որակին, ոչ թե քանակին,
- Վերանորոգել հագուստը այն դեն նետելու փոխարեն,
- Աջակցել էթիկապես ճիշտ գործունեություն ծավալող և կայուն ապրանքանիշերին:

Բանավեճ

Հարցրեք մասնակիցներին. Ի՞նչ փոքր փոփոխություն կարող եք անել՝ նորաձևությանն առնչվող ձեր սովորությունների հետ կապված:

Եզրափակեք. **Անհատական ընտրությունները նպաստում են հավաքական ազդեցությանը, և սպառողների սովորությունների մեջ փոքր փոփոխությունները կարող են տանել նորաձևության կայուն միտումների:**

ԵՄ ծրագրեր երիտասարդների ներգրավվածության և կլիմայի ոլորտում

Հայաստանի երիտասարդական և կլիմայական ծրագրեր

- Education and Awareness, Armenia Tree Project: https://www.armeniatree.org/education-and-awareness
- Young people in Armenia lead climate action, UNICEF: https://www.unicef.org/armenia/en/stories/climapolis-cop-young-people-armenia-lead-climate-action?utm_source=chatgpt.com
- SunChild Eco Clubs, Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) https://www.fpwc.org/contents/page/sunchild-eco-club-network
- SunChild International Environmental Festival, Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) https://sunchild.am/
- Environmental Education, AUA Acopian Center for the Environment: https://ace.aua.am/function-areas/environmental-education/
- Environmental Informational Portal: https://www.ecolur.org/en/
- Environmental films: https://www.ecolur.org/en/news/films/
- ArAves, Bird ID Quiz https://araves.org/bird-id-quiz/

Եվրոպական ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և միջոցառումներ

- European Youth Event (EYE) (16-30): https://european-youth-event.europarl.europa.eu/en
- Erasmus+ Youth Exchanges or Training Courses
  e.g.: TC “Guardians of Green: Preventing forest fires by protecting nature”:
  https://www.instagram.com/p/C_vRx7VohJW/ https://www.instagram.com/p/DDb6GIBIoHj/?img_index=1

Կրթական և շահերի պաշտպանության ծրագրեր

- The Young Energy Ambassadors (YEA) program (18-35): https://youth.europa.eu/news/drive-transition-become-young-energy-ambassador_en
- European Climate Pact Ambassadors: https://climate-pact.europa.eu/get-involved/become-pact-ambassador_en

Մրցույթներ և ֆինանսավորման հնարավորություններ

- European Charlemagne Youth Prize (16-30 working on a European project, individually or in groups): https://youth.europa.eu/news/take-part-european-charlemagne-youth-prize-2025_en
- New European Bauhaus Prizes and NEB Boost for Small Municipalities: https://new-european-bauhaus.europa.eu/index_en

Օգտակար ռեսուրսներ

- SunChild Eco-clubs' documentaries: https://youtube.com/playlist?list=PLoJF49ticCxz_r-eJwsGcatId5zDH8PXC&si=9ksBTIiG7JKGjW3X
- Alternative Youth Center: https://apy.am/en/alternative-space
- What is civic engagement? https://www.youtube.com/watch?v=x6bNwmrBPXI
- Booklet on Sustainability - Climate change vocabulary: https://www.crpe.ro/wp-content/uploads/2023/07/Deliverable-D1.2-booklet-on-climate-change-vocabulary.pdf
- Tools for climate action (15-24 y.o.): https://www.unicef.org/lac/sites/unicef.org.lac/files/2021-07/tools-for-climate-action-02.pdf
- Prepare to act! Practical tips for climate advocacy and action (15-24 y.o.): https://www.unicef.org/lac/media/28571/file/prepare-to-act.pdf

Տեսանյութեր

- E.g., Climate Change Explained series: https://www.youtube.com/watch?v=5kuHd6b5ZY0&list=PL8HWK0G9m3B4J_7mEAo5aJclmYt2-P8XY&ab_channel=IntergovernmentalPanelonClimateChange%28IPCC%29
- V2: https://www.youtube.com/watch?v=jS0ZIUtsQHg&ab_channel=EuropeanEnvironmentAgency
- V3: https://www.youtube.com/watch?v=0DSJpTqMrNA&ab_channel=WorldBank
- V4: https://www.youtube.com/watch?v=g9uLN8oRbMw&ab_channel=PADFORG
- V5 (RO): https://www.youtube.com/watch?v=ir4DgZFTbuY&ab_channel=DWDocumentary

Օգտակար տվյալներ

- https://www.unicef.org/climate-action
- https://ed.ted.com/ted_ed_collections/our-changing-climate

Վիկտորինաներ

- https://climatekids.nasa.gov/trivia/
- https://education.nationalgeographic.org/resource/test-your-knowledge-climate-change/
- https://www.bbc.co.uk/bitesize/articles/z48hqp3

Co-funded by
the European Union

Եվրոպական միության համաֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, սակայն, պատկանում են միայն հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ համընկնեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետներին: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ էլ տրամադրող մարմինը պատասխանատվություն չեն կրում բովանդակության համար:

Իրականացնողներ՝

Romanian Center for European Policies
(CRPE/Ռումինիա)

Gyumri Youth Initiative Centre NGO
(YIC/Հայաստան)

Center for Research and Advocacy in EU Policies
(CAREP/Մոլդովա)

Association Atinati
(ATINATI/Վրաստան)